ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՀՈՌՈՄԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

ՈՐՈՇՈՒՄ N 13-Ա

<<30 >> նոյեմբերի 2016 թվական Հոռոմ համայնք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՀՈՌՈՄԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 11-Ի ԹԻՎ 16-Ա ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի, 27-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 72-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի «բ» ենթակետի դրույթներով, համայնքի ավագանին

որոշում է

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Հոռոմ համայնքի ղեկավարի 2017 թվականի պաշտոնային դրույքաչափը սահմանել Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորի պաշտոնային դրույքաչափի նկատմամբ 37.05 %-ի չափով 245.000/երկու հարյուր քառասունհինգ հազար) դրամ:
2. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Հոռոմ համայնքի ավագանու 2015 թվականի դեկտեմբերի 11-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Հոռոմ համայնքի ղեկավարի 2016 թվականի վարձատրության չափը սահմանելու մասին» թիվ 16-Ա որոշումը:
3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում 2017 թվականի հունվարի 1-ից:

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

Կողմ-7 Դեմ-0 Ձեռնպահ-0

Թ.Գասպարյան՝ կողմ ----------
Հ.Պապիկյան՝ կողմ----------
Գ.Զատիկյան՝ կողմ ----------
Ս.Մելիքսեթյան՝ կողմ----------
Ա.Մկրտչյան ՝ կողմ ----------
Բ.Մկրտչյան ՝ կողմ ----------
Զ.Մանուկյան ՝ կողմ ----------

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա.ՊԱՍԿԵՎԻՉՅԱՆ

«30» նոյեմբերի 2016 թվական
Հոռոմ համայնք